դեռ. 1914–ի դեկտեմբերին քիչ մնաց Ռուսահայաստանի մի մասն էլ վրա դնար. Էնվէրի գնդերը հասել էին արդէն Սարըղամիշի բարձունքները, և Կովկասի մայրաքաղաքը մատնուել էր խուճապի: Փոխարքան պատրաստւում էր փախչելու դէպի լեռների ա՛յն կողմը, և կովկասեան թրքութիւնը ցնծութեան մէջ էր...

Հրաշքը միայն փրկեց Կովկասը թիւրքական ներխուժումից: Ջարդւած Սարըղամիշի տակ՝ Էնվէրն իր զայրոյթի բովանդակ թոյնը թափեց թիւրքահայ ժողովրդի դլխին: Հայերի բնաջնջման դաւը վաղուց էր նիւթւած իթթիհատի որջում: Ատելի էր հարկաւոր — ահա և առիթը. հայերն էին թիւրքերի պարտութեան պատճառը: Հարկաւոր էր մաքրել ռազմաբեմը այդ վնասակար տարրից: Եւ ահա առաջ է քաշւում տեղահանութեան ծրագիրը: Պրուսական ու բելդիական ճակատներում տեղահանութիւն նշանակում էր տնտեսական քայքայում, Թիւրքիայում՝ ջարդ ու կոտորած էր: Եւ 1915թ. ապրիլից սկսած, ամիսներ շարունակ, թիւրքերը դրաղւեցին հայերի ծրագրւած բնաջնջումով: Ապրիլ 11–ին զանդւածօրէն ձերբակալւելով՝ դէպի մահ քշւեց Պոլսահայ մտաւորականութիւնը: Ապա՝ դիւղեր ու քաղաքներ դատարկւեցին և աւարի ու աւերի ենթարկւեցին: Մի միլիոնից աւելի ժողովուրդ մորթոտւեց կամ մեռաւ տեղահանութեան ճանապարհին և արաբական անապատների աւազներում: Դարերով կուտակւած անհաշիւ հարստութիւն, տնտեսական ու մշակութային թանդագին նիւթեր կորստեան մատնւեցին: Մի ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդ խաչ հանւեց ու նահատակւեց վայրագօրէն՝ աշխարհի աչքի առջև — ոչ ոք չըմբոստացաւ ու չմիջամտեց: Եւ ո՞վ կարող էր, ո՞վ սիրտ ու կամք ունէր միջամտելու. երկրագունդը խեղդւում էր արեան մէջ: Մարդկութեան խիղճը քար էր կտրել...

Թիւրքահայկական խնդիրը լուծւում էր թիւրքերի ձեռքով: Թիւրքահայաստան առանց հայերի — այս համապատասխանում էր և ռուսների հաշիւներին: Մինչ թիւրքերը կլանւած էին հայկական տեղահանութիւններով ու ջարդերով, ասդին ռուս զօրավարները կաղրիլ էին խաղում թիւրքական ռազմաբեմում: Մէկ քայլ առաջ, երկու քայլ յետ—ռուս բանակը անվերջ յառաջխաղացումներ և նահանջներ էր անում, որոնց ընթացքին խսպառ քար ու քանդ եղան և իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը: Դիտում կա՞ր այդ նահանջների մէջ, թէ՞ նրանք ռազմադիտական անհրաժեշտութիւններ էին — միեւնոյնը չէ՞ հայ ժողովրդի համար: Նա դաղթում, տնաքանդ էր լինում և ամէն դաղթի հետ կորցնում էր ե՛ւ իր տնտեսական ու բարոյական կորովը, ե՛ւ մարդկային հաւաքական կերպարանքը:

Թիւրքահայկական նահանջների պարպումից յետոյ հետզհետէ փոխւեց և ռուսների վերաբերումը դէպի հայերը: 1916 թւին այլեւս «հայկական ինքնավարութեան» մասին խօսք չէր լսւում. կամաւորական խմբերը լուծւեցին: Կովկասում իշխում էր մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը՝ հակահայ քաղաքականութեան ներշնչողներից մէկը: Մտածւում էր դրաււած վայրերը յանձնելու ռուս դաղթականներին: Ծրագրւում էր Ալաշկերտի ու Եփրատեան